ԴԱՇՏՈՒՄ

Ամրան տօթ օր է։ Օդն անշարժ, խեղդուկ.
Վերից անխնայ արևն է կիզում.
Եռում է հունձը։ Գեղջկուհի, գեղջուկ
Ոսկի արտերում խուրձեր են դիզում։

Դիզում են անխոնջ, զուարթ, յուսալից,
Ընդում, քրքջում, հանաքներ անում.
Վտակի նման, այրուած դէմքերից
Քրտինքն է թորում ու շոգիանում։

Եւ խորթ է նրանց թուլամորթ տըրտունջ,
Ոյժն է անըսպառ բանուկ ձեռքերում.
Այնտեղ վաստակն է արդար, սիրաշունչ
Մարդկանց սիրտ տալիս ու ոգևորում...

Գրթառնստ երկինք, որ լոյս—հայեացքով
Նայում ես երկրի մըշակի կեանքին,—
Այդ կեանքը լի է հազար զըրկանքով,
Մի թող դու նրան կարօտ քո խնամքին...

Ալ. Ծատուրեան